ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

21 մայիս 2025 թվական N 03-Լ

ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով, 40.1-ին հոդվածի 14-րդ մասով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցություններից «Վերածնվող Հայաստան» կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտորական եզրակացությունն ստացվել են 2024 թվականի ապրիլի 22-ին, որից հետո տարեկան հաշվետվությունների ստուգման ընթացքում ինչպես պետական մարմիններից, այնպես էլ կուսակցություններից տեղեկություններ և փաստաթղթեր են պահանջվել, միաժամանակ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Հայ յեղափոխական դաշնակցություն», «Բարգավաճ Հայաստան», «Հանրապետություն», «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտորական եզրակացություններն ստացվել են 2025 թվականի մայիսի 5-ին, որից հետո ևս տարեկան հաշվետվությունների ստուգումն իրականացնելու նպատակով ինչպես պետական մարմիններից, այնպես էլ կուսակցություններից տեղեկություններ և փաստաթղթեր են հայցվել, որոնցից վերջին

տեղեկատվությունը ստացվել է 2025 թվականի մայիսի 15-ին, իսկ պետական մարմիններից և կուսակցություններից հայցված մեծածավալ տեղեկատվության ուսումնասիրման համար օրենքով սահմանված 30-օրյա ժամկետը բավարար չէ ստուգումն ավարտելու համար, ուստի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ***որոշում է.***

1. Պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման ժամկետը երկարաձգել 60 (վաթսուն) օրով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Մ. ԳԱԼՍՏՅԱՆ

ք. Երևան